Մրցույթ՝ «Երևանի Վահագն Դավթյանի անվան թիվ 37 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (15 դասաժամ), Ֆիզիկայի (6 դասաժամ), անգլերենի (8դասաժամ), ռուսաց լեզվի (22 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ):
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայութ- յան դեպքում
- Ինքնակենսագրություն
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ–ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաս- տող փաստաթղթեր՝ առկայության դեպքում
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստողփաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 18-ը** ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. սեպտեմբերի **20-ին ժամը 14:00,** Երևանի Վ. Դավթյանի անվան թիվ 37 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Քանաքեռհէկ 14 : Տեղեկությունների համար զանգահարել 010 23-10-32 հեռախոսահամարով: